Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Երևանի Ն. Պ. Աղբալյանի անվան թիվ 19 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Ռուսաց լեզու

Թեմա՝ Մշակութային կարողունակության զարգացումը դասավանդման ընթացքում

Վերապատրաստող, մենթոր՝ Գոռ ՄՍրիկյան

Ուսուցիչ՝ Նաիրե Ղալաչյան

Երևան 2022

Հետազոտական հարց. Ինչպես և ինչու զարգացնել աշակերտի մշակութային կարողականությունը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Միջազգային մի շարք մասնագետների հոդվածներն ու գրքերն, ինչպես նաև անձնական մասնագիտական փորձը, ցույց են տվել, որ դպրոցական հաջողություններն ավելի դյուրին են տրվում այն աշակերտներին, որոնք ունեն մշակութային հարուստ հիմք. հաճախ են այցելում թանգարաններ, ներկայացումներ, սովորում են նվագել երաժշտական որևէ գործիք և իհարկե՝ շատ են ընթերցում: Իննսունական թվականների վերջին լույս տեսած աշխատությունների մեջ հաճախ խրախուսվում էր դպրոցական կրթության ակտիվ համադրումը մշակույթի հետ, մասնավորապես՝ արվեստի միջոցով սոցիալական թեմաների արծարծումը տարբեր տարիքի խմբերի աշակերտների հետ: Իրական արդյունքների հասնելու համար, խրախուսվում էր այս աշխատանքը սկսել տարրական դասարաններում՝ նկարչության միջոցով: Մոտեցումներից մեկը՝ *Էքսպրեսիոնիստականը*, վկայում էր, որ բավարար է առաջին դասարանի երեխային տալ ջրաներկ, որպեսզի նա ստեղծագործի: Սակայն համաձայն այդ մոտեցման՝ ուսուցիչը չպետք է միջամտի, քանզի նրա դերը բացառապես կլիմայի ստեղծումն է, որն արդեն իսկ խթանում է ստեղծագործականության արտահայտմանը: Այս մոտեցումը հիմնված է այն գաղափարի շուրջ, որ ամեն երեխա բնականից արվեստագետ է, և պետք է զարգացնել նրա տաղանդը քանի դեռ սոցիալական կոդերն ու կարծրատիպերը չեն դեֆորմացրել նրա երևակայությունը: Ամեն միջամտում կխանգարի տաղանդի բնականոն զարգացմանը կամ ինչպես ասում էր մեծն իսպանացի նկարիչ Պիկասոն՝ *«Ինձ մի ողջ կյանք պետք եղավ սովորելու համար նկարել ինչպես երեխա»:*

Սակայն քսանմեկերորդ դարի ուսումնական ոլորտի նոր մասնագետների ալիքը եկավ մերժելու վերոհիշյալ Էքսպրեսիոնիստական տեսակետը՝ ընդգծելով ուսուցչի մեծ դերը երեխայի ստեղծագործական ներուժի և մշակութային հիմքի

զարգացման մեջ։ Եվ դրան պետք է հասնել ոչ միայն նկարչության պրակտիկայով (որը դպրոցում հնարավոր է իրականացնել միայն նկարչության դասերի ժամանակ, այն էլ տարրական դասարաններում), այլ նաև ներառելով մշակութային տարբեր ուղղությունների գործածումը դպրոցական առարկաների դասավանդման ժամանակ։ Ուսուցչի դերն է ուղղորդել երեխային՝ մատուցելով ճիշտ նյութեր և մեթոդներ, քանզի, բնականաբար, ցուցադրվածի որակը հիմնավոր դեր ունի աշխատանքի հաջողության մեջ։

Սույն թեմայի ընտրությունը պայմանավորված է այն խորին համոզմամբ, որ մշակութային կարողականության զարգացումը հիմնավոր դեր ունի աշակերտի թե՛ դպրոցական, թե՛ ավելի ուշ մասնագիտական հաջողությունների մեջ։

Համեմատելով ոլորտի տարբեր մասնագետների կարծիքները, ես կփորձեմ հասկանալ, թե ինչպես և հատկապես ինչու է այդքան կարևոր զարգացնել երեխայի մշակութային կարողականությունը։ Աշխատության ավարտին, ես կբերեմ անձնական դասերից մեկի օրինակը, որն ըստ իս, կարողանում է ներառել մինչ այդ քննարկված որոշ կարևոր կետեր։

Արտասովոր դաս՝ թանգարանում

Կուզենայի սկսել սույն թեմայի քննարկումը մի յուրօրինակ դասով, որն անց էր կացվել Փարիզի Օրսե թանգարանում յոթերորդ դասարանի աշակերտների հետ: Առաջին հայացքից, կթվա որ թանգարանում աշակերտների դասը պետք է լինի կերպարվեստի կամ գրականության շուրջ, բայց ի զարմանս ինձ՝ ոչ:

1. *Տասնյակ դպրոցականներ դանդաղ քայլելով առաջանում են Փարիզի Օրսե թանգարանի կենտրոնական սրահով՝ հետևելով իրենց երկու ուսուցիչներին: Վերջիններս ցանկանում են երեխաների սեպտեմբերյան թանգարանային այցելությունը սկսել հստակ ընտրված մեկ արվեստանմուշով: Խումբը վերջապես կանգ է առնում կտավի դիմաց, ուսուցիչները երեխաներին խնդրում են ծալապատիկ նստել և ուշադիր ուսումնասիրել աշխատանքը: «Ո՞վ է այս կտավի հեղինակը», հարցին գրեթե միաձայն հնչում է Վան Գոգի անունը: Իրապես, երեխաների առջև է հոլանդացի նկարիչ Վան Գոգի 1889 թվականին արված ինքնադիմանկարը: Երեխաներն առաջին անգամ չեն Օրսե թանգարանում, նրանք բազմիցս ունեցել են այստեղ անցկացվող դասեր, այնպես որ Վան Գոգի վրձինն իրենց համար ավելի քան ճանաչելի է: Փոխարենն, անծանոթ է կտավի ցուցադրության վայրը. չէ՞ որ «Վան Գոգ – Գոգեն» սրահը հինգերորդ հարկում է և ոչ՝ կենտրոնական սրահում: Բայց ուսուցիչներն ուշադրություն չեն դարձնում երեխաների շփոթված շշուկներին և խնդրում են նկարագրել, թե ինչ են նրանք տեսնում, ինչ վրձնահարվածներով է նկարիչը պատկերել իր դիմագծերը, առաջարկում են խոսել նկարի ֆոնային՝ այդքան խորը կապույտի մասին: Երբ թվում է, որ կտավի շուրջ ամեն ինչ ասված է, երեխաները սկսում են նկատել տարօրինակ փոփոխություններ: Արվեստանմուշի կենտրոնական հատվածում հայտնվում է մեծ սև կետ, մի քանի վայրկյան անց կետերը շատանում են՝ արդյունքում կտավը դարձնելով լիովին մշուշոտ պատուհան, որտեղից միայն կարելի է գուշակել Վան Գոգի դիմագծերը: Վերջիվերջո*

նկարը սևանում է, և երեխաները հասկանում են, որ սա բնօրինակը չէ, այլ շրջանակի մեջ վերցված լազերային ինստալյացիան։ Ժամանակն է բացատրել հիացած երեխաներին այս փորձարկման իմաստը։ Աշակերտները տեսան այն չորս փուլերը, որով անցնում են տեսողության խնդիրներ ունեցող մարդիկ. մեկ կամ բազմաթիվ սև կետեր, մշուշոտ պատկեր կամ էլ՝ կատարյալ մթություն։ Երեխաների հիացմունքն ի սպառ վերանում է՝ գիտակցելով տեսողական հիվանդությունների հնարավոր լրջությունը։ Բայց ուսուցիչն այդ նույն կտավ-էկրանին շտապում է ցուցադրել աչքի կառուցվածքը՝ ծիածանաթաղանթը, բիբը, ակնաբյուրեղի նրբությունը, բացատրելով՝ որքան կարևոր է աչքերին ճիշտ հետևելը և ամեն փոքր նշանին ուշադրություն դարձնելը, քանզի այդպիսով կարելի է նվազեցնել կուրության դեպքերը։ Այս երկար «դասի» ավարտին երեխաները բարձրանում են հինգերորդ հարկ՝ պարզ ու հստակ հայացքով հիանալու Վան Գոգյան այս անգամ անշարժ դիմանկարներով։

Իհարկե, այս ամենի մասին կարելի էր նաև խոսել դասարանում, աչքի կտրվածքի դասագրքային պատկերներով, բայց արդյոք փոխանցված տեղեկատվությունը կթողներ նույնքան խորը հետք երեխաների հիշողության մեջ, որքան Օրսեի թանգարանում վերապրածը։

Աշակերտներին (և հետևաբար նաև նրանց ծնողներին) բաժանված գրքույկում գրված էր, որ աշխարհում ավելի քան 2,2 միլիարդ մարդ տեսողության խանգարումներ ունի, որոնցից առնվազն 1 միլիարդն ունի այնպիսի հիվանդություն, որը հնարավոր էր կանխել վաղ տարիքից հետևելու և խնդիրը

ժամանակին խնամելու դեպքում: Այս նպատակով Ֆրանսիայի առողջապահության մի շարք հաստատություններ որոշեցին համագործակցել դպրոցների և թանգարանների հետ՝ մատուցելով բարդ և ցավալի թեման արվեստի միջոցով: Ֆրանսիայում անցկացված այս դասի մասին կարդալուց հետո, նորեն համոզվեցի որ յուրաքանչյուր թեմա և առարկա կարելի է քննարկել երեխաների հետ մշակույթի միջոցով՝ ջարդելով կարծրատիպերը:

Հարց. Արդյոք արվեստը, և ընդհանուր առմամբ՝ մշակույթը, բավարար ներկայություն ունեն մերօրյա ուսումնական հաստատությունների դասավանդման ծրագրում:

Մանկաբույժ և մանկական հոգեբան Ֆրանսուազա Դոլթոն վստահեցնում էր, որ դպրոցում դասավանդվող առարկաներից միայն արվեստն է կարող մաքսիմալ կերպով նպաստել աշակերտի ներքին և արտաքին հավասարակշռության զարգացմանը, իսկ եթե ավելի ճիշտ՝ «աշակերտների հուզական-ռացիոնալ հավասարակշռության զարգացմանը»: Չէ՞ որ դպրոցի նպատակն է ամենից առաջ կառուցել հավասարակշված, իր ուժերին հավատացող, շրջապատի հետ համահունչ ապրող սոցիումի լիիրավ անդամ: Իսկ ստեղծագործական գործունեությունն այն հազվագյուտ ինտելեկտուալ գործողություններից է, որը պահանջում է կոնվերգենտ (հայեցակարգային) և դիվերգենտ (փորձառական) մտածողությունների միջև անհրաժեշտ փոխազդեցություն:

Կոնվերգենտ և Դիվերգենտ մտածողության հավասարակշռության մասին.

Եթե կարճ, ապա՝ հոգեբան Ջոյ Փոլ Գիլֆորդի սահմանած կոնվերգենտ և դիվերգենտ մտածողության հասկացություններն իրենց կայուն տեղն են գտել 1956 թվականից: Կոնվերգենտ մտածողությունը ենթադրում է խնդրի մեկ հստակ սահմանված լուծում գտնելը՝ գծային մոտեցում, որոշակի փուլերով գործողությունների կատարում, հետևելով օրինաչափությանը: Տերմինի հիմքում է

լատիներեն *convergere* բառը, որը թարգմանաբար նշանակում է շարժվել դեպի մեկ և նույն կետը: Բնականաբար, դասական դպրոցների նպատակն է զարգացնել երեխայի կոնվերգենտ մտածողությունը, քանի որ մեր դպրոցներում դասավանդվող հիմնական առարկաները՝ մաթեմատիկական, ֆիզիկական կամ նույնիսկ կենսաբանական, նախօրոք ենթադրում են ճիշտ պատասխան, որը հաճախ կարելի է գտնել դասագրքի վերջում: Եվ ուսուցիչը բարձր գնահատական է շնորհում այն աշակերտին, ով համաձայն ձևանմուշի, հնարավորինս արագ, գալիս է ճիշտ պատասխանին: Բայց բոլորովին վերջերս, կարդացի մի դեպքի մասին, երբ ուսուցիչը ցածր գնահատական էր նշանակել աշակերտին, ով սահմանված ժամանակից շուտ գտել էր խնդրի ճիշտ պատասխանը: Ուրեմն ի՞նչու ցածր գնահատական – որովհետև աշակերտը լուծել էր խնդիրը այլ ճանապարհով՝ չհետևելով դասագրքում մատուցված ձևաչափին: Եվ սա ցայտուն օրինակ է բացատրելու համար մյուս՝ դիվերգենտ մտածողությունը: Ինչպես իր լատիներեն divergere՝ «տարանջատվել» հիմքն է հուշում՝ դիվերգենտ մտածողությունը ներառում է ստեղծագործականություն, այն թույլ է տալիս գեներացնել գաղափարներ, մշակել մի քանի լուծումներ մեկ խնդրի համար: Այսինքն գլոբալ առումով երկու մտածողությունների նպատակը նույնն է՝ սահմանել խնդրի լավագույն լուծումը, պարզապես մեկը հիմնվում է տրամաբանության, մյուսը՝ ստեղծագործականության վրա: Եվ ուրեմն մերօրյա դպրոցները պետք է կարողանան հավասարապես զարգացնել դպրոցականների երկու մտածողությունները՝ դասական առարկաներին զուգահեռ շեշտադրելով մշակութային ուղղությունների գործածումը: Քանզի ի տարբերություն ավելի «ճանաչողական և գծային» դպրոցական առարկաների, որոնք կենտրոնացած են ռացիոնալ ինտելեկտի և կոնվերգենտ մտածողության վրա, մշակութային ճյուղերի կիրառումը անմիջականորեն մոբիլիզացնում է դիվերգենտ մտածողությունը, իմացության ինտուիտիվ, գեղագիտական և ոչ վերբալ եղանակները՝ նպաստելով աշակերտի մեջ մարդկային տեսակների զարգացմանը:

Այնուամենայնիվ, կրթության ոլորտում ճանաչված բրիտանացի փորձագետ և բազմաթիվ գրքերի հեղինակ Սըր Քեն Ռոբինսոնը վստահեցնում է, որ այսօրվա դպրոցները «սպանում են» երեխաների ստեղծագործական ունակությունները: Նրա խոսքով՝ մեր դպրոցներն իրենց ուսումնական մոդելները հիմնում են 19-րդ դարի համակարգերի վրա, ժամանակ, երբ չէր խրախուսվում հասարակության նորարարության, ստեղծագործականության կամ քննադատական մտածողության խթանումը, ժամանակ, երբ կար թեմաների և հմտությունների խիստ հիերարխիա: Ծնողները, ապա նաև ուսուցիչները մոռանում են, որ երեխաները աշխարհ են գալիս օժտված արտառոց տաղանդներով: Մենք անտեսում ենք նրանց դիվերգենտ մտքի ներուժը, տարիների ընթացքում անգիտակցաբար /կամ գիտակցաբար/ թուլացնելով նրանց այդ հոգեկան մկանները՝ կրթելով նրանց բացառապես կոնվերգենտ մտածողությամբ: Օրինակ, դոկտոր Բրզոզովսկին՝ ոլորտի փորձագետներից մեկը, մատնանշում է հետաքրքիր մի բան, որը նա հայտնաբերել էր կոլեգաների հետ հետազոտություն կատարելիս:[1] Հինգ տարեկանների դիվերգենտ մտածողությունը մեծապես նման է ինտելեկտուալ բարձր ունակություններով մեծահասակների մտածողությանը: Այսպիսով, երբ այս տարիքի երեխաներին հարցնում են, թե բաժակը, մատիտը կամ կոշիկը քանի՞ գործածություն ունի, նրանք կարող են տալ մինչև 100 (վավեր) պատասխան: Համեմատության համար նշենք, որ չափահաս մարդը սովորաբար տալիս է միջինը 10-12 պատասխան: Այնուամենայնիվ, եթե նույն տարամիտ մտածողության թեստը տանք 10 տարեկան երեխային, ապա կարող ենք տեսնել, որ այդ ներուժը կրճատվում է միջինում 60%-ով:

Մշակութային կարողունակության զարգացմանը դերը աշակերտի հոգեբանության մեջ.

Մանկական հոգեբանության կառուցման մեջ հիմնավոր դեր ունի դպրոցը, որտեղ նա մեծանում և ձևավորվում է որպես անհատ: Մշակութային կարողականության

[1] Ջորջ Լենդի և Բեթ Ջարմանի հետ կատարված այս աշխատանքի տվյալները հրապարակվել են Break Point and Beyond. Mastering the Future Today գրքում:

զարգացումը թույլ է տալիս աշակերտին հաշտվել իր ներաշխարհի հետ, ուսումնասիրել իր այն կողմերը, որոնք երբեմն շփոթեցնող են, նույնիսկ իռացիոնալ: Այլ կերպ ասած, մշակութային ամուր հիմքը նպաստում է երեխաների առողջ ինքնության ձևավորմանը, հոգեկան հավասարակշռությանը:

Հարկավոր է նաև հաշվի առնել այն փաստը, որ հայաստանյան դպրոցների աշակերտները մեծանում են մշտապես ողողված պատերազմական լուրերով, քննարկումներով, գործողություններով. բազմաթիվ աշակերտների ընտանիքներում կան զինված ուժերում ծառայող ընտանիքի անդամներ: Եվ ցավոք, ի տարբերություն Օրսեի թանգարան այցելող երեխաների, մենք աշխատում ենք մշտապես լարված գիտակցությամբ և խոցելի հոգեբանությամբ աշակերտների հետ: Ինչպես կոնֆլիկտային գոտում գտնվող յուրաքանչյուր երկիր, մեր մեծացող սերունդն ավելի մեծ վտանգի տակ է՝ ունենալու սոցիալական, հուզական կամ վարքային դժվարություններ: Խոցելի հոգեվիճակում գտնվող երեխաների հետ աշխատելիս ավելի է մեծանում մշակույթի կարողականության զարգացման կարևորությունը, որը կօգնի երեխաներին գտնել բարեկեցության ուղիներ, հաղթահարել անձնական այն մարտահրավերները, որոնք խանգարում են նրանց ուսմանը:

Մշակույթը որպես կապող օղակ դպրոցի և աշակերտի միջև.

Երեխայի մշակութային կարողականության զարգացումը ամրացնում է նաև աշակերտ-դպրոց կենսական կապը: Մոտիվացված արվեստով, երեխաները կարողանում են ընդգրկվել նաև այլ առարկաների մեջ, որտեղ մշակույթի գործիքավորումն անհնարին է: Թատրոնի, պարի և երաժշտության միջոցով աշակերտները սովորում են բացվել ուրիշների հետ, փնտրել իրենց հարցադրելու նոր ուղիներ և կապեր ստեղծել իրենց դասընկերների, ընտանիքի և շրջակա միջավայրի հետ:

Ավելի բարձր տարիքի աշակերտների հետ աշխատելիս խրախուսվում է գեղարվեստական պերֆորմանսի կամ թատրոնի օգտագործումը, որը մարմնի ու ձայնի ինքնարտահայտման միջոց է: Այդ աշխատանքի ընթացքում աշակերտը, հայտնվելով մյուս երեխաների ու մեծահասակների հայացքի ներքո, արագորեն համակվում է ամոթի զգացումով՝ չհամարձակվելով արտահայտվել: Եվ ուրեմն ուսուցիչը պետք է կարողանա օգնել աշակերտին՝ անհրաժեշտ վարժություններով հաղթահարել կաշկանդող զգացմունքները:

Դասարանային ծրագրի գեղարվեստական որևէ ստեղծագործության ուսումնասիրությունից և քննարկումից հետո, դրա բեմադրումը կամ պարզապես դերերով ընթերցումը, հիանալի վարժություն է աշակերտներին դուրս բերելու կարծրատիպերից, զարգացնելու նրանց ինքնավստահությունը, բայց նաև խթանելու խմբային համախմբվածությանը:

Գրականության մեջ հանդիպող թերևս ամենավառ գրական կերպարներից մեկը, ում միջոցով կարելի է իրականացնել վերոհիշյալ աշխատանքը աշակերտների հետ, Փոքրիկ Իշխանն է:

Փոքրիկ Իշխանը դպրոցում

Ամենևին զարմանալի չէ, որ Աստվածաշնչից հետո «Փոքրիկ Իշխանն» աշխարհում ամենաշատ թարգմանված գիրքն է: Հեղինակի՝ Անտուան Դը Սենթ Էկզյուպերիի կյանքում կար երկու մեծ կիրք՝ ավիացիան և գրականությունը: Նա սիրում էր կրկնել, որ թռչելն ու գրելն իր համար նույն բանն է: «Մենք նույն մոլորակի

բնակիչներ ենք, նույն նավի ուղևորներ», ասում էր Էքզյուպերին: Այնուամենայնիվ «Փոքրիկ Իշխանը» գրքի ամենասկզբում հեղինակը նշում է, որ իր ստեղծագործական ներուժը մեծահասակների երևակայության պակասի պատճառով հակված էր մեռնելու, կրթական համակարգի նպատակն էր նորմալացնելու իր մտածելակերպը և ուղորդելու դեպի սպասված հեռանկարները՝ «աշխարհագրություն, պատմություն, թվաբանություն և քերականություն»: Եվ չնայած մեծերի կողմից չհասկացված լինելու ափսոսանքին, հեղինակը գրպանում շարունակում էր պահել մանուկ ժամանակ արված նկարը՝ հուսալով հանդիպել այն մեկին, ով կկիսի իր հետ կյանքի պարզ ճշմարտությունը…

Դպրոցում աշակերտների հետ «Փոքրիկ Իշխանի» ընթերցումն ու քննարկումը չափազանց կարևոր է: Այս գրքի մոլորակներն ու դրանց բնակիչները՝ Բանական հրամաններ տվող Թագավորն ու Փառամոլը, Հարբեցողն, ով խմում է, որ մոռանա, որ ամաչում է, որ խմում է, Աստղեր հաշվող զբաղված ձեռներեցն ու Աշխարհագրագետը, ով երբեք դուրս չի եկել իր աշխատասենյակից, այս բոլոր կերպարներն ու մոլորակները երեխաների հետ քննարկման մեծ դաշտ են ստեղծում՝ զարգացնելով նրանց դիվերգենդ մտածելակերպն ու երևակայությունը:

Ժամերով կարելի է քննարկել աշակերտների հետ գրքում ներկա սիմվոլները, յուրաքանչյուր պատկեր մեկնաբանել՝ կախված անձնական ընկալումից: Գրքում առկա խորհրդանիշների միջոցով երեխաներին կարելի է բացատրել մի շարք կրոնական, այլաբանական և պատմական հասկացողություններ: Շեշտադրությունը կարելի է դնել գրքի հիմնական մի քանի խորհրդանիշների վրա: ***Ջրազրկված անապատը***՝ պատերազմի, քաոսի, ավերածությունների, մարդկային անգթության, նախանձի և եսասիրության պատճառով ավերված աշխարհի խորհրդանիշն է: Բնականաբար, պատահական ընտրություն չէ, քանզի Էքզյուպերին գիրքը գրել է 1943 թվականին, մի աշխարհում, որտեղ հազարավոր մարդիկ մահանում էին պատերազմներից և հոգևոր ծարավից:

«Գիտե՞ս ինչու է անապատը լավ, – Փոքրիկ իշխանը հարցնում է օդաչուին – Նրա մեջ ինչ-որ տեղերում աղբյուրներ են թաքնված…»։

Աղբյուրներ և ջրհոր, որպես պատկեր-խորհրդանիշի հերթական մարմնավորում, չափազանց նշանակալից Սենտ-Էքզյուպերիի համար։ Ջուրը մաքրության, պտղաբերության և կյանքի աղբյուրի հնագույն խորհրդանիշն է։ Կյանքի հիմնաքարը՝ հավերժական ճշմարտություններից մեկը, անսասան երևույթ՝ լի խորը իմաստությամբ, որը «մարդիկ կարող են գտնել մի հատիկ վարդի կամ մի կում ջրի մեջ»։

Կան առանձին խորհրդանիշներ, որոնց միջոցով կարելի է աշակերտների հետ քննարկել անգամ քրիստոնեական պատկերագրությունը։ Օրինակ՝ ***Վարդի այլաբանական խորհրդանիշը***։ Վարդը քմահաճ ու հուզիչ է, իսկ Փոքրիկ իշխանը լիովին հյուծված է նրանից։ Բայց մյուս կողմից, Վարդն այնքան գեղեցիկ է և անպաշտպան, որ տղան ներում է ծաղկին իր քմահաճույքները։ Քրիստոնեական պատկերագրության մեջ կարմիր վարդը և նրա փշերը Քրիստոսի չարչարանքների խորհրդանիշն են, վարդի կենտրոնը ներկայացնում է միասնության կետը, Հիսուս Քրիստոսի սիրտը, աստվածային լույսը, արևը՝ կյանքի անիվի կենտրոնում։ Մարիամ Աստվածածնին երբեմն անվանում են Երկնային Վարդ և անմեղ Վարդ՝ առանց փշերի՝ հիշելով նրա մաքրաբարոյությունը։

Աշակերտների հետ թերևս քննարկման ամենակարևոր կերպարներից է ***Աղվեսը***՝ որպես Իշխանին ճշմարտությունը փոխանցող խորհրդանիշ։ Նա է, որ բացատրում է տղային (և նրա միջոցով բոլոր ընթերցողներին) թե ինչ է նշանակում ընտելացնել. «Դու ինձ համար դեռևս փոքրիկ տղա ես՝ նման հարյուր հազարավոր փոքր տղաների։ Ես առայժմ քո կարիքը չեմ զգում։ Ոչ էլ դու ես իմ կարիքն զգում։ Քեզ համար սովորական աղվես եմ, որ նման է հարյուր հազարավոր աղվեսների։ Բայց եթե ընտելացնես ինձ, մեկս մյուսի կարիքը կզգանք։ Աշխարհում դու միակը կլինես ինձ համար։ Աշխարհում ես միակը կլինեմ քեզ համար …։ Եթե դու ինձ ընտելացնես, կյանքս արևի պես կշողա, կճանաչեմ այն ոտքերի ձայնը, որ մյուս բոլոր ոտնաձայներից տարբեր կլինի»։ Սա գրքի այն լավագույն հատվածներից է,

որի միջոցով երեխաների հետ հնարավոր է քննարկել ընկերության, հավատարմության և իհարկե՝ սիրո թեման։

Ի վերջո, գրքի կենտրոնական խորհրդանիշը՝ հենց ինքը՝ ***Փոքրիկ Իշխանն*** է։ Նա տիեզերքում մարդ թափառողի խորհրդանիշն է, ով փնտրում է կյանքի թաքնված իմաստը։ Սա միևնույն ժամանակ և ռոմանտիկ հերոս է, և նկարիչ-ստեղծող, և մեծահասակ, որի մեջ երեխան ապրում է մինչև իր օրերի ավարտը։

Խորը իմաստ է թաքնված նաև այն մոլորակի պատկերի մեջ, ուր վերադառնում է Փոքրիկ Իշխանը։ Սա մարդու հոգու և տան խորհրդանիշն է՝ մարդու սիրտը, իսկ տունը խորհրդանիշն է աշխարհի կենտրոնի, ապաստանի, մեկուսացման և պաշտպանության։ Էքզյուպերին ցանկանում է ասել, որ յուրաքանչյուր մարդ ունի իր մոլորակը, իր կղզին և իր ուղղորդող աստղը, որը երբեք պետք չէ մոռանալ։

Փոքրիկ իշխանի կողմից հանդիպած մոլորակներն ու հերոսները թույլ են տալիս աշակերտների հետ խոսել մարդկանց նյութական պատյանի մասին։ Միայն երեխայի և իրական արվեստագետի հոգին ենթակա չէ նյութական շահերին և դրանցից բխող չարիքին։ Մանկության այս պաշտամունքը բացահայտ է Էքզյուպերիի ստեղծագործության մեջ։ Բայց նրա «չափահաս» հերոսների հիմնական ողբերգությունը ոչ այնքան այն է, որ նրանք ենթարկվում են նյութական աշխարհին, որքան այն, որ նրանք «կորցրել և մոռացել են» իրենց բոլոր հոգևոր որակները։

Այս փիլիսոփայական աշխատության միջոցով աշակերտներին հարկավոր է բացատրել չարի թեման, որը հեղինակը բարձրացնում է երկու խորհրդանիշներով։ Նախ՝ չարությունը անհատի ներսում, որը մենք տեսնում ենք մոլորակների բնակիչների ներքին դատարկության մեջ. դրանք անձնավորում են մարդկային բոլոր արատները։ Բայց աշակերտներին հարկավոր է բացատրել, որ Էքզյուպերին ոչ մի կերպ հոռետես չէ։ Նա հավատում է, որ մարդկությունը, ինչպես Փոքրիկ Իշխանը, կհասկանա լինելու գաղտնիքը, և յուրաքանչյուր մարդ կգտնի իր առաջնորդող աստղը, որը կլուսավորի իր կյանքի ուղին։ Չարի թեմայի երկրորդ

սիմվոլիկան՝ Բառբաբներն են՝ որպես չարի անձնավորված կերպարներ։ Էքզյուպերին ցանկանում է, որ մարդիկ զգուշորեն արմատախիլ անեն իրենց մեջ ներկա չարիքը՝ «բառբաբներին», որոնք սպառնում են պատռել մոլորակը։ Խոսելով բառբաբների մասին՝ հեղինակը փորձում է մարդուն պատմել իր մեղքերի մասին, որոնք կարող են կոտրել ինչպես երկիրը, այնպես էլ՝ հոգին։ Հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես է ժամանակի ընթացքում արմատախիլ չեղած մի փոքր բողբոջը՝ մեղքը, աճում-ուժեղանում, քարանում ու պատառոտում հոգին՝ զրկելով կենդանի որևէ էակ ունենալու հնարավորությունից։

«Փոքրիկ իշխանի մոլորակի վրա, ինչպես մնացած բոլոր մոլորակների վրա, աճում են և՛ օգտակար, և՛ վնասակար խոտեր: Այդ նշանակում է, որ այնտեղ կան լավ ու օգտակար խոտերի լավ սերմեր և գեշ խոտերի, այսինքն՝ մոլախոտերի վատ սերմեր: … Եթե դա ապագա վարդի թուփ է, թող աճի, ինչքան ուզում է: Բայց եթե դա մի որևէ մոլախոտ է, հենց որ ճանաչեցիր, պետք է անմիջապես արմատախիլ անես»: Սա այլաբանորեն խոսում է յուրաքանչյուրի դրական և բացասական կողմերի մասին, որոնց դեմ պետք է պայքարել կամ էլ ընդունել։

Այսպիսով «Փոքրիկ Իշխանը» գրական աշխատության շնորհիվ երեխաների հետ կարելի է քննարկել կյանքի կարևորագույն թեմաները՝ մարդասիրություն, եղբայրություն, ճշմարտություն, հանդուրժողականություն, ինքնաճանաչում և այլն։ Հավանաբար պատճառներից մեկը, որ այս ստեղծագործության շուրջ երեխաների հետ աշխատանքն այդքան հետաքրքիր է ընթանում այն է, որ գիրքը խոսում է միաժամանակ և՛ մեծերի, և՛ երեխաների հետ։ Չէ որ անգամ գրքի ներածության մեջ ասվում է, որ *«բոլոր մեծահասակները նախնառաջ երեխա են եղել, թեպետ նրանցից քչերն են հիշում այդ մասին»*։ Փոքրիկ Իշխանը թույլ է տալիս հավասար աստիճանի վրա դնել ուսուցիչ-աշակերտ հարաբերությունը և թույլ տալ խոսել նույն լեզվով, չմոռանալ վարդերից հոտ քաշել, նայել աստղերին և իհարկե հնարավորինս երկար տեսնել գառնուկներ սպիտակ տուփերի մե

Ամփոփում

Ալբերտ Էյնշտեյն ունի մի փայլուն միտք, այն է. «Բոլորը ծնվում են հանճարներ: Բայց եթե ձկանը դատեք ծառ մագլցելու ունակությամբ, նա իր կյանքը կանցկացնի՝ մտածելով, որ հիմար է»: Կարծում եմ, ուսուցչի մասնագիտությունը շատ սերտ է քայլում հոգեբանի մասնագիտության հետ: Աշխատելով երեխաների հետ, մենք պետք է փորձենք նրանցից յուրաքանչյուրից պահանջել այն, ինչ նա կարող է անել, չէ որ «հեղինակությունը նախ հենվում է բանականության վրա»:

Զարգացնելով երեխաների մշակութային կարողականությունը, անցկացնելով որքան հնարավոր է շատ դասեր կապված արվեստի ճյուղերի հետ, տալով նրանց հնարավորություն կիրառել իրենց և՛ դիվերգենտ, և՛ կոնվերգենտ մտածելակերպը, մենք աշակերտներին օգնում ենք, գրագետ գրելուն և արագ գումարումներ անելուն զուգահեռ, լսել իրենց սրտի ձայնը և երազել, հավատարիմ լինել ընկերության և սիրո մեջ, չլինել անտարբեր աշխարհում կատարվող չարի նկատմամբ, չէ որ մեզանից յուրաքանչյուրը պատասխանատու է ոչ միայն իր, այլև մեկ այլ մարդու ճակատագրի համար:

Մեր աշխարհում, որը թվում է, թե լցված է ատելությամբ և պատերազմերով, աշակերտներին առաջնահերթության սկզբունքով պետք է պատել լավատեսությամբ: Համոզված եմ, որ մշակութային կարողականության զարգացումը նրանց կօգնի ավելի լավ հասկանալ մեզ շրջապատող խենթ և ոչ բանական աշխարհը, ավելի հարուստ դարձնել կյանքը, սերմացած լավատեսության միջոցով հավատալ բարության և արդարության հաղթանակի մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Տվյալ աշխատությունը շարադրվել է հետևալ գրական և հետազոտական աշխատանքների միջոցով, օգտագործվել են մի շարք մասնագիտական կոնֆերանսներին ելույթներ:

Ֆրանսուազա Դոլթոյի բազմաթիվ աշխատություններ, մասնավորապես՝

«Մանկության հիմնական էտապները» (Folio Essais)

«Կրթության ճանապարհները» (Folio Essais)

«Փոքրիկ իշխանը», Անտուան դը Սենտ-Էքզյուպերի

«Արդյո՞ք դպրոցները սպանում են ստեղծագործականությունը:», Սըր Քեն Ռոբինսոն

Նույն թեմայով Քեն Ռոբինսոնն ունի TED զրույց, հասանելի այս հղումով https://www.ted.com/talks/sir_ken_robinson_do_schools_kill_creativity

«Վարպետել ապագան այսօր» (**Breakpoint and Beyond: Mastering the Future Today),** Ջորջ Լենդ և Բեթ Ջարման

Օրսե թանգարանի «Գեղարվեստական և մշակութային կրթության նախագիծը», որն իրականացվել է Էդուարդ Բրանլիի և Լուի Թյուիլյեի ավագ դպրոցների հետ համատեղ: